ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
09 սեպտեմբերի 2025 թվական, N 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, 69/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-112-0460-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառարավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Արսեն Մանվելի Ղարիբյանի դիմումը, սեփականության իրավունքի 22062016-06-0013 վկայականը, «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 22.03.2024թ. թիվ 19 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդի համայնքի Օձուն գյուղ, 5-րդ փողոց, 69/1 հասցեում գտնվող, քաղաքացի Արսեն Մանվելի Ղարիբյանին սեփականություն իրավունքով պատկանող, 06-112-0460-0031 ծածկագով, 0.02 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ			

2.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
3.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
4.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
5.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
6.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
7.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
8.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
9.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
10.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
11.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
12.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
13.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
14.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ., սեպտեմբերի 09,
Լոռու մարզ, ք. Ալավերդի